

Հավելված 5

Նախագիծ

**ԵՊՀ ԻՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(2016-2020 թթ.)**

Իջևան-2016

«ԵՊՀ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Մասնաճյուղն **ազգային** աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիքներով ու անհրաժեշտ կարողություններով օժտված մասնագետներ է պատրաստում բակալավրի և **մագիստրոսի** որակավորումներով՝ մասնագիտական կրթական ծրագրերով իրականացվող բարձրորակ կրթության, շահակիցների պահանջմունքների բավարարման, ուսանողակենտրոն միջավայրի ապահովման շնորհիվ: Մասնաճյուղն իր գիտական հետազոտություններով, նորարարական ուսուցմամբ, ժողովրդական հին ու նոր արհեստները արվեստին մոտեցնելու և կիրառելու դարձնելու հետևողականությամբ նպաստում է հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունների ու մշակութի զարգացմանն ու նորովի մատուցմանը տարածաշրջանում:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Երևանի պետական համալսարանը ձգտում է տրամադրելու որակյալ կրթական ծրագրեր, իրականացնելու նորարարական ուսանողամետ ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում:

ԵՊՀ-ն ձգտում է դառնալու այնպիսի հաստատություն, որը՝

- ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր՝ խարսխված հետազոտության, ստեղծագործ աշխատանքի ու նորարարության վրա և համահունչ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի հիմնարար սկզբունքներին,
- ապահովում է ուսանողների՝ բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը,
- մատչելի է և ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում հասարակության ամենատարբեր շերտերին,
- ուսանողներին և աշխատողներին տրամադրում է բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր,
- իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովում է որակի անընդհատ բարելավում՝ բուհի գործուն և արդյունավետ վարչարարության և կառավարման միջոցով,
- տրամադրում է լրացուցիչ շարունակական կրթության և մասնագիտական խորհրդատվության ծառայություններ՝ հանրային պահանջարկին համապատասխան:

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հիմնարար արժեքներն են.

1. Ուսանողի հաջողությունը

Մասնաճյուղի ուշադրության կենտրոնում առաջին հերթին ուսանողի կրթական ձեռքբերումները, ուսումնառությունից նրա բավարարվածությունը և հաջողություններն են: Այդ նպատակով Մասնաճյուղը ուսանողի կարիքները դնում է իր ակադեմիական գործունեության և օժանդակ ծառայությունների կազմակերպման, կրթական քաղաքականության և կրթական ծրագրերի մշակման հիմքում:

2. Մատչելի կրթություն

Մասնաճյուղը կարևորում է յուրաքանչյուր կարողունակ անհատի՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը և ուսանողներին ապահովում է բարձրորակ և մատչելի կրթական փորձառությամբ, տրամադրում ֆինանսական աջակցություն:

3. Բարձրակարգ գիտամանկավարժական կազմ

Մասնաճյուղի կարևորագույն ներուժը և գործունեության հաջողության հիմնական գրավականը նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմն է, որի շնորհիվ Մասնաճյուղն իրականացնում է իր առաքելությունը:

4. Ակադեմիական ազատություն և ազնվություն

Մասնաճյուղը կարևորում է յուրաքանչյուր ուսանողի և աշխատողի ակադեմիական ազատությունը և ազնվությունը:

5. Ժողովրդավարական միջավայր

Մասնաճյուղը կարևորում է ուսանողների և աշխատողների մասնակցությունը բուհին վերաբերող կարևորագույն հարցերի քննարկմանն ու որոշումների ընդունման գործընթացին՝ արժևորելով բազմակարծությունն ու ժողովրդավարական միջավայրը:

6. Սոցիալական գործընկերություն

Մասնաճյուղը կարևորում է սոցիալական գործընկերությունը՝ որպես շահերի հավասարակշռման, սոցիալական համերաշխության և հավասարության ապահովման, ինչպես նաև խնդիրների լուծման արդյունավետ եղանակների որոշման հիմնական միջոց:

7. Համազգային պատասխանատվություն

Գիտակցելով իր դերը մեր երկրում գիտելիքների վրա հիմնված հասարակություն ձևավորելու գործում՝ Մասնաճյուղը ձգտում է դառնալու միջազգային չափանիշներին համապատասխան համազգային գիտակրթական կենտրոն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից:

Խնդիր 1.1. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Վերանայել բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը (առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար):
2. Մտեղծել բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «խնամակալություն»՝ ծրագրի պատշաճ մշակման և իրականացման նպատակով:
3. Վերամշակել բակալավրի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:
4. Վերանայել կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը:

5. Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխանեցված՝ բակալավրի կրթական ծրագրեր:
- Ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման նորացված կանոնակարգային հենք:
- Պրակտիկաների վերաբերյալ հարցումների բարելավված արդյունքներ:

Խնդիր 1.2. Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ակտիվացնել «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի» աշխատանքները՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտությունները արդիականացնելու ու զարգացնելու նպատակով:
2. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:
3. Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:
4. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը բակալավրի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:
5. Իրականացնել դասընթացների փաթեթների (պարտֆոլիոների) կիրառումը բոլոր առարկաների համար՝ ավելացնելով դասախոսի կողմից կիրառվող որակի ապահովման մեխանիզմները:
6. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և գրագողությունը կանխելու նպատակով:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի» գործունեության և իրականացվող ծրագրերի արդյունավետության վերաբերյալ դասախոսական կազմի հարցման արդյունքներ:
- Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների բարելավված արդյունքներ:
- Ֆորմատիվ գնահատման մեթոդների ընդլայնված կիրառում կրթական ծրագրերում:

Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովների հիման վրա ստեղծել կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապի ապահովելու համար:
2. Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը:
3. Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամբիոններում:
4. Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը:
5. Նախաձեռնել և իրականացնել ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթաց:
6. Նախապատրաստել և առցանց եղանակով իրականացնել ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Ուսանողների և շրջանավարտների հարցումների առցանց համակարգ և բարելավված արդյունքներ:
- Բոլոր կառույցներում և գործընթացներում՝ պլանավորում, իրականացում, ստուգում, բարելավում շրջափուլով աշխատելու ձևավորված պրակտիկա:

Խնդիր 1.4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար:
2. Մասնակցել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար:
3. Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:
4. Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար:
5. Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:
6. Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:
7. Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Ներդրված վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ:
- Կրթական ծրագրերի՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով ապահովվածության աճ:
- Հեռակա ուսուցման դասընթացների ապահովվածություն էլեկտրոնային ռեսուրսներով:

II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնանք և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

Խնդիր 2.1. Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով:
2. Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար:
3. Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և ղեկավարումը:
4. Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրի կրթական ծրագրերում:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակ:
- Ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակումների թվի աճ:
- ՈւԳԸ գիտաժողովներում մասնակիցների թվի աճ:

Խնդիր 2.2. Չարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում:
2. Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը: ?
3. Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը: ?

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Առնվազն մեկ համատեղ հետազոտական ծրագիր յուրաքանչյուր ֆակուլտետում:
- Ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի ու դրանց մասնակիցների թվի աճ:

Խնդիր 2.3. Խթանել Մասնաճյուղի հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ամրագրել հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ որպես ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանման գործունեության անհրաժեշտ բաղադրիչ: ?
2. Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում Մասնաճյուղի աշխատողների հրապարակումները:
3. Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող «Ակունք» ԵՊՀ գիտական հոդվածների ժողովածուում:
4. Կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին Մասնաճյուղի աշխատողների մասնակցությամբ:
5. Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումների թվի աճ:
- «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու Օտար լեզուներով տպագրվող հանդեսների թվի աճ:
- Միջազգային գիտաժողովներին մասնակցած աշխատողների թվի աճ:
- Միջազգային դրամաշնորհային ծրագրերի և գիտական նախագծերում մասնաճյուղի աշխատակիցների թվի աճ:

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, խթանել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը:

Խնդիր 3.1. Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Վերանայել ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգը:
2. Ձարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը:
3. Ապահովել ինտերնետային պորտալի դիմամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները:
4. Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը:
5. Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը:
6. Մշակել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգ, ընդլայնել և զարգացնել համալսարանի ներգրավումը համազգային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները:
7. Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը:
8. Գրահրատարակչական գործունեության արդյունքները առավելագույնս նպատակա-

ուղղել հանրային ծառայությունների մատուցմանը:

Առաջնության գնահատման ցուցիչներ

- ԶԼՄ-ներում ԵՊՀ-ի վերաբերյալ նպատակային և դրական լուսաբանումների թվի աճ:
- Պորտալի այցելությունների և կայքի հղումների ավելացում 50 %-ով:
- Մարքեթինգային և գովազդային նյութերի բազմազանեցում և ավելացում:
- Հանրային կարիքներին ուղղված ծրագրերի ընդլայնում:

Խնդիր 3.2. Ջարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը և պարբերաբար իրականացնել շուկայում առկա լրացուցիչ կրթական ծրագրերի մշտադիտարկում:
2. Մշակել լրացուցիչ կրթության հայեցակարգ՝ ապահովելու Համալսարանի ծրագրերի մրցունակությունը:
3. Մշակել հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը:
4. Բարձրացնել լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Լրացուցիչ կրթական ծրագրերի թվի աճ:
- Վերապատրաստված ունկնդիրների թվի աճ:

IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Չարգացնել դասախոսական կազմի ներուժը, ներգրավելով բարձրորակի դասախոսական կազմ, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

Խնդիր 4.1. Չարգացնել դասախոսական կազմի ներուժը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը:
2. Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիրը, համաձայն որի՝
 - կատարելագործել դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչները և գործընթացները,
 - ապահովել հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը որակավորման բարձրացման կրթական ծրագրերին:
3. Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ:
4. Մահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների:
5. Դասախոսների համար ստեղծել համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:

6. Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Որակավորման բարձրացում անցած շուրջ 100 դասախոս:
- Վերապատրաստված շուրջ 30 երիտասարդ դասախոս:

Խնդիր 4.2. Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել և ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգ:
2. Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների գարգացման ծրագիր:
3. Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար:
4. Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար:
5. Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ:
6. Վարչական համակարգի ոչ բարձրագույն կրթություն ունեցող աշխատակիցների համար կազմակերպել որակավորման դասընթացներ և հետագայում անցկացնել ատեստավորում:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Մարդկային ռեսուրսների կառավարման գործող ստորաբաժանում, կառավարման էլեկտրոնային համակարգ:
- Վարչական պաշտոնի հաստատված անձնագիր:
- Ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատանքի հաստատված նկարագրեր:
- Վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստում և ատեստավորում:

Խնդիր 4.3. Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը:
2. Մշակել վարչական և ուսումնասօժանող աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և համապատասխան կարգ:
3. Բարձրացնել աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության:
4. Ներդնել սոցիալական աջակցության բազմաբնույթ ծրագրեր:
5. Համակողմանիորեն զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի, հանգստի և մարզաառողջարանային բազաների պայմանները, ապահովել դրանց մատչելիությունը բոլոր աշխատողների և սովորողների համար:
6. Բարձրացնել աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով տարեկան ՀՀ պաշտոնական գնաճի տեմպերը:

7. Ավելացնել սոցիալական ծրագրերի համար հատկացված հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում:

***Առաջընթացի գնահատման
ցուցիչներ***

- ԵՊՀ աշխատակիցների աշխատավարձի բարձրացում՝ միջինում մինչև 25 %:
- Դասախոսների տարբերակված հավելավճարի բարձրացում:
- Սոցիալական ծրագրերի բազմազանեցված տեսականի և սոցիալական ծախսերի ավելացում:

V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:

Խնդիր 5.1. Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել մասնաճյուղի ենթակառուցվածքները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Տեխնոլոգիապես վերազինել լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները:
2. Ստեղծել լեզուների ուսուցման կենտրոնի ենթակառուցվածք:
3. Արդիականացնել նիստերի դահլիճի, խորհրդակցությունների սենյակի տեխնիկական հագեցվածությունը:
4. Արդիականացնել մարզադահլիճը և մարզասրահը:
5. Իրականացնել Մասնաճյուղի հյուրանոցային համալիրի վերանորոգման աշխատանքները
6. Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ զուգահեռ ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ:
7. Վերանորոգել և արդիականացնել գրադարանի ընթերցասրահներն ու գրապահոցը:
8. Զարգացնել ուսումնական մասնաշենքերի հսկողության ենթակառուցվածքը:
9. Արդիականացնել օպերատիվ տպագրական աշխատանքներ իրականացնող ենթակառուցվածքը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Տեխնոլոգիապես վերազինված շուրջ 50 լսարան ու ուսումնական լաբորատորիա:
- Վերանորոգված մարզադահլիճ:
- Վերանորոգված ուսումնական մասնաշենքեր:

Խնդիր 5.2. Չարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ:
2. Ստեղծել «սովորող-համալսարան» վիրտուալ տիրույթ՝ վարչական, ուսումնական գործընթացներին (առարկայական ծրագրեր, հարցաշարեր, գրականություն և այլն) առնչվող տեղեկատվությամբ: ?
3. Չարգացնել ներքին համակարգչային օպտիկամանրաթելային, լարային և անլար ցանցը՝ մեծացնելով կապուղիների թողունակությունը:
4. Բարձրացնել ներքին տեղեկատվական համակարգերի պաշտպանվածության մակարդակը:
5. Մշակել գրադարանի զարգացման հայեցակարգ:
6. Ավարտել հիմնական ուսումնական գրականության թվայնացման գործընթացը:
7. Ընդլայնել համալսարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին:
8. Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը:
9. Բարձրացնել գրադարանային ծառայությունների որակը, ընդլայնել ընթերցա-

արահների և համակարգչային սրահների աշխատաժամերը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Մասնաշենքերում ձևավորված ներքին օպտիկամանրաթելային ցանց, համակարգերի պաշտպանվածության արդի չափանիշներին համապատասխան մակարդակ:
- «Սովորող-համալսարան» գործող վիրտուալ տիրույթ
- Գրադարանի ամբողջական էլեկտրոնային քարտարան:
- Արդիականացված գրադարանային ծառայություն:

VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:

Խնդիր 6.1. Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից:
2. Ձարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները:
3. Ներդնել առարկայական խորհրդատվությունների համակարգ բակալավրի ծրագրի առաջին կուրսի ուսանողների համար, որոնք կիրականացնեն ավարտական կուրսերի ուսանողները: /սա նոր է դրել ԵՊՀ/
4. Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները:
5. Մշակել ուսանողների կողմից վարչական անձնակազմին տարբեր խնդիրներով դիմելու ընթացակարգ:
6. Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը:
7. Նպաստել ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների կայացմանը:
8. Ընդլայնել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողներին մատուցվող ծառայությունները:

9. Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվությունների համակարգ առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար: սա նոր է դրել ԵՊՀ/

10. Ապահովել շրջանավարտների հետ մասնաճյուղի և առանձին ֆակուլտետների շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Մասնաճյուղին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Արդյունավետ ուսանողական խորհրդատվական և լրացուցիչ ծառայություններ:
- Բազմազանեցված մարզամշակութային ծրագրեր:

Խնդիր 6.2. Զարգացնել մասնաճյուղի ուսանողական կազմակերպությունների կարողություններն ու խթանել ուսանողական ինքնակառավարումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել ուսանողական ինքնակառավարման հայեցակարգ:
2. Կազմակերպել ուսանողական կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստող և ուսանողների առաջնորդությանն աջակցող ուսուցողական դասընթացներ:
3. Խթանել մասնաճյուղի ուսանողական կազմակերպությունների ներհանրապետական և միջազգային համագործակցությունը:
4. Նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ՈԻԳԸ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ծրագրերում ներգրավված ուսանողների թվի աճ:
- Ուսանողների մասնակցությունը և առաջնորդությունը խթանող տարաբնույթ ուսուցողական դասընթացներ:
- Ուսանողական կազմակերպությունների մասնակցությամբ միջհամալսարանական և միջազգային ծրագրերի թվի աճ:

Զարգացնել Մասնաճյուղի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին: Ընդլայնել օտարերկրյա ուսանողների համակազմը:

Խնդիր 7.1. Զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Քայլեր ձեռնարկել բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու համար:
2. Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար Մասնաճյուղի կայքէջը:
3. ԵՊՀ-ի հետ համատեղ մասնաճյուղում Տավուշի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը:
4. Ավագ դպրոցների և քոլեջների ստվորոդների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան:
5. Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում և այնտեղ գործող դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովել անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:

6. Ընդլայնել ԵՊՀ ԻՄ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների և քոլեջների շրջանակը:
7. ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում:

- Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների առնվազն 30 % մասնաբաժին:
- Պայմանագրային հիմունքներով ԵՊՀ ԻՄ-ի հետ համագործակցող ավագ դպրոցներից Մասնաճյուղ եկող դիմորդների թվի աճ:
- Բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետների դիմորդների թվի աճ:

Խնդիր 7.2. Օպտիմալացնել Մասնաճյուղի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հանրության պահանջներին, կատարելագործել ընդունելության ընթացակարգերը և աշխատակարգերը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը:
2. Կրթական ծրագրերով ընդունելության ամենամյա պլանավորման համար աշխատանքներ իրականացնել համապատասխան ընթացակարգերի և աշխատակարգերի կատարելագործման ուղղությամբ:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Բակալավրիատի առկա և հեռավա ուսուցման համակարգեր ընդունված 400 դիմորդ:

Խնդիր 7.3. Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Մասնաճյուղի կրթական բոլոր աստիճաններում՝ իրականացնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ տարածաշրջանի երկրներում՝ անհրաժեշտության դեպքում ստեղծելով ԵՊՀ ներկայացուցչություններ:
2. Քայլեր ձեռնարկել ուսանողների հավաքագրմամբ զբաղվող օտարերկրյա կրթական միջնորդ կազմակերպությունների հետ համագործակցության թույլտվություն ստանալու համար:
3. Մասնաճյուղի կայքում ներկայացնել ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, ինչպես նաև Համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր:

4. Ստեղծել և կիրառել նախապատրաստական կրթական ծրագրեր՝ օտարերկրյա դիմորդների լեզվական և ընդհանուր կրթական գիտելիքների մակարդակը ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու համար:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- ԵՊՀ սովորողների համակազմում օտարերկրյա ուսանողների 1 % մասնաբաժին:

Ապահովել Մասնաճյուղի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել Մասնաճյուղի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Խնդիր 8.1. Ապահովել Մասնաճյուղի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ձեռնարկել քայլեր ընդլայնելու մասնաճյուղի մասնակցությունը ԵՊՀ գիտակրթական ծրագրերին՝ նպաստելով մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը:
2. Ակտիվացնել Մասնաճյուղի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին:
3. Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ ԻՄ-ի վճարովի ծառայությունները:
4. Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Մասնաճյուղի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Մասնաճյուղին ֆինանսական, նյութական և

այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները:

5. Ուսումնասիրել Համալսարանի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- ԵՊՀ ԻՄ-ի հավասարակշռված բյուջե:
- Բազմազանեցված ֆինանսական մուտքեր:

Խնդիր 8.2. Զարգացնել Մասնաճյուղի ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ներդնել ռիսկերի կառավարման համակարգ՝ շուկայական և տնտեսական տարաբնույթ ռիսկերի նկատմամբ Մասնաճյուղի ռեսուրսների կայունության ապահովման նպատակով:
2. Ներդնել ֆինանսական ոլորտի հաշվառման տեղեկատվական ցանցային համակարգը՝ ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման օպերատիվության ու արդյունավետության ապահովման նպատակով:
3. Օպտիմալացնել և վերապատրաստել ֆինանսական կառավարմանն առնչվող ստորաբաժանումների կազմը:
4. Մշակել և իրականացնել ռեսուրսախնայողության համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր:

Առաջնության գնահատման ցուցիչներ

- Ռիսկերի կառավարման համակարգ:
- Ֆինանսական ոլորտի վերապատրաստված աշխատողներ:
- Ռեսուրսախնայողության ծրագրեր:

Խնդիր 8.3. Կատարելագործել Մասնաճյուղի իրավական դաշտը և կառավարման համակարգը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Օպտիմալացնել Մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը, բարձրացնել ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը:
2. Մշակել ՀՀ բուհերի կազմակերպական-իրավական ձևի մասին օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների փաթեթ և ներկայացնել ՀՀ ԿԳՆ: /սա նոր է ԵՊՀ գրել/
3. Մշակել ՀՀ բուհերի իրավահավասարության ու արդար մրցակցության ապահովման ծրագիր և ներկայացնել ՀՀ ԿԳՆ: /սա նոր է ԵՊՀ գրել/
4. Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել Մասնաճյուղի նոր կանոնադրությանը:
5. Զարգացնել Մասնաճյուղի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և տեղեկատվական համակարգերը:
6. Կատարելագործել ԵՊՀ ԻՄ-ում ներքին աուդիտի համակարգը:
7. Ստեղծել տեղական և արտերկրյա բուհերի հետ ինստիտուցիոնալ համեմատական գնահատման (բենչմարքինգի) համակարգ:

8. Բարձրացնել սովորողների ներգրավվածության արդյունավետությունը Մասնաճյուղի կառավարման գործընթացներում:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Մասնաճյուղի ստորաբաժանումների և աշխատողների հաշվետվողականության ամբողջականացված համակարգ:
- Վերանայված ներքին իրավական ակտեր:
- Գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն համակարգ:
- Կառավարման համակարգում ներգրավված վերապատրաստված սովորողներ:

Խնդիր 8.4. Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել էթիկայի սկզբունքները և բարեվարքության կանոնները համալսարանական միջավայրի համար:
2. Մշակել և իրականացնել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների նոր ծրագիր:
3. Բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը:
4. Բարձրացնել աշխատողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը համալսարանի կառավարման համակարգում: Խորհրդում և գիտական խորհրդում:
5. Կատարելագործել մասնաճյուղի պաշտոնական կայքէջը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Էթիկայի սկզբունքների և բարեվարքության կանոնների առկայությունը
- Գիտխորհրդի կողմից հաստատված՝ ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի կատարողական:
- Աշխատողների և ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացում:
- Եռալեզու կայքէջի առկայությունը

IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

Խնդիր 9.1. Ջարգացնել Մասնաճյուղի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջազգային գործունեության ռազմավարական ծրագիր
2. Ստեղծել միջազգայնացման աջակցող եռալեզու կայք:
3. Իրականացնել միջազգայնացմանն ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում:
4. Իրականացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոսների, աշխատակիցների և ուսանողների օտար լեզվի իմացություն մակարդակի բարձրացման ծրագիր:
5. Իրականացնել Հայաստանում և այլ երկրներում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վերաաբերյալ տեղեկատվական նյութերի ստեղծում և տարածում: **Հետևել, որ ԵՊՀ -ի նյութերում գրված լինի մեր մասին:**

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Եռալեզու կայքէջ:
- Հայաստանում և այլ երկրներում իրագրության մակարդակի բարձրացում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վերաբերյալ

Խնդիր 9.2. Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ներդնել օտարալեզու ուսումնական ծրագրեր և մոդուլներ:
2. Օգտագործել օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ԵՊՀ կապերը
3. Օժանդակել և խրախուսել մասնակցությունը միջազգային գիտահետազոտական ծրագրերին, սեմինարներին, կոնֆերանսներին:
4. Աշխատողների և սովորողների շրջանում բարձրացնել ակադեմիական շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության մակարդակը

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Գործող ծրագրերում ներդրված 4 կամ 4-ից ավել օտարալեզու մոդուլ
- Ակադեմիական շարժունության ծրագրերի մեջ ներգրավված ուսանողների և դասախոսների թվի ավելացում